

Ամսաթվեր

Ալեքսը այսօրվա ամսաթվի (2.2.2022) մեջ հետաքրքիր փաստ նկատեց: Այն բաղկացած է ընդամենը երկու թվանշաններից՝ 2 և 0: Ալեքսին հետաքրքրեց, թե հաջորդ անգամ երբ այդպիսի ամսաթիվ կլինի: Նա իսկույն գլխի ընկավ, որ դա կլինի 18 օր հետո՝ 20.2.2022-ին: Հիմա նա Ձեզ առաջարկում է գրել ծրագիր, որ կամայական ամսաթվի համար գտնի, թե այդ օրվանից քանի օր հետո կլինի ամսաթիվ, որը բաղկացած է առավելագույնը 2 իրարից տարբեր թվանշաններից: Այս խնդրում օրվա և ամսի համապատասխանող թվերի առջևից գրվող 0-ները հաշվի չեն առնվում: Այսինքն այսօրվա ամսաթիվն է համարվում 2.2.2022-ը, ոչ թե 02.02.2022-ը: Համարել, որ փետրվարն ունի 28 օր: Հիշեցում տարվա ամիսներն ունեն համապատասխանաբար հետևյալ քանակությամբ օրեր՝ [31, 28, 31, 30, 31, 30, 31, 31, 30, 31, 30, 31]:

Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված է ամսաթիվ՝ <օր>.<ամիս>.<տարի> \$որմատով: Ամսաթիվն ընկած է 1.1.1-ից 31.12.2110 փակ միջակայքում:

Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է արտածել մեկ բնական թիվ՝ մուտքում տրված ամսաթվից քանի օր հետո կլինի ամսաթիվ, որը բաղկացած է առավելագույնը 2 իրարից տարբեր թվանշաններից:

Օրինակ

Մուտք Ելք

2.2.2022 18

10.11.111 1

Բացատրություն

Երկրորդ օրինակի մուտքում նշված օրվա հաջորդ օրը 11.11.111-ն է, իսկ այդ ամսաթիվը բաղկացած է ընդամենը 1 թվանշանից, ինչը ևս բավարարում է պահանջում նշված պայմաններին, հետևաբար պատասխանը 1 է: